







րեւակայեալ հայեցողութիւն մը: Ինտրայի մէջ՝ իր բացատրութիւններէն հետեւցնելով, կը զգացուի երկիւղած հաւատացեալի մը զգացումները, մանկութեան տարիներէն իր մէջ ստեղծուած, իրր հոգեւոր հարստութիւն ու առհասարակ ժառանգութիւն: Ընթերցումներու միջոցաւ իմաստասիրական նոր տեսութիւններ կը ներկայանան իր մտքին, որ կը հետաքրքրուի ամէն բանով, ու անոնցմէ կրած տպաւորութիւնները կ'ալեկոծեն իր հաւատացողի ըմբռնումները եւ զգացումները: «Ներաշխարհ»ի մէջ քիչ չեն այդ էջերը, որոնց մէջ կը գտնենք արձագանգը ներքին այս ալեկոծ վիճակներուն:

Այս պայմաններուն մէջ լաւագոյն էր իրեն համար մտնել ինքնիր մէջ ու հետազոտել իր ենթագիտակցութեան խորքը, քննարկել իր խառնուածքի գաղտնի մնացած բնագոյային մղումները եւ յոյզերը, իր յարումները եւ փափաքները, ներքին ձայներու եւ խօսքերու արձագանգները, առօրեայ կեանքի հանդէպ իր անգոր հակազդեցութիւնը, իր սիրոյն փթթումը, որոնք պատանեկութեան շրջանին ինքնաբուխ եւ յորդ կ'ընձիւղին: «Հովին հօր իրականութիւնը կը թափանցէ խոհալքը, ուր անցած կեանքի մը անթեղուած դրուագները կ'արթննան, մտքի մէջ յուշերը կ'արծարծին հովին, որուն չշունչները լեցուն են սարսուղին անցեալով» (32): Ասոնք իր բառերն են. միշտ ալ սարսուղը, վիշտը, գուցէ նրբացած ու փափկացած, բայց նոյնքան զօրաւոր ազդեցութեամբ, կ'ընկերէ բանաստեղծին զգացողութեանց եւ յուշերուն, ընծայելով անոնց տխրութեան մարդկային երանգ մը: Այս ցաւազին վիճակը կազմուելուն պատճառ եղած են իր կեանքի տխուր պայմաններն ալ ու կրած նեղութիւնները. կեանք մը առանց խաղաղութեան եւ սրտի ուրախութեան: Բացի մօրը եւ հօրը մահերուն պատճառած վիշտէն, ժամանակ մը ապրած է հեռու ծնունդավայրէն՝ Սեւ ծովի ափին մօտ խեղճ գիւղակի մը մէջ, աղքատ եւ մենաւոր ուսուցիչի անմխիթար կեանքը, որ շատ տառապեցուցած է զինքը. հոգեկան աննպաստ պայմաններ ալ կրնան ներգործած ըլլալ իր ջղայնօրէն տկար եւ գիւրայոյզ նկարագրին վրայ, եւ խոցոտող վիշտ մը ծանրօրէն ճնշած է իր սիրտը: Միւս կողմէ ինքը գիտակից է իր բանաստեղծական տաղանդով օժտուած ըլլալուն, եւ բուն էր փափաքը ազատօրէն նուիրուելու արուեստագետի իր աշխատանքին. բայց նիւթական պայմանները գիւրութիւն չէին ընծայեր իրականացնելու իր գաղափարականը, եւ գուցէ ասիկա տեսականօրէն ամենամեծ կսկիծն էր, որ կը վշտացնէր իր գործով զեղուն սիրտը: Ասով հանդերձ չ'ատեր կեանքը, անսահման սիրով կը փարի անոր: Պատանեկութեան տարիներու իղձերն ու երազանքները սովորաբար չեն չքանար. հուսկ տարիներ յետոյ, գուցէ տարբեր ուղիներով յանկարծ կը զարթնուն՝ ձգտելով իրականացման:

Ինտրայի համար պարտաւոր ենք ըսել թէ իր բանաստեղծութիւնը համակուած է վշտակութեան զգացումով ու միացած խորհրդապաշտ տրամադրութեան: Սիրտ մը, որ գրեթէ միշտ անձին խեղճութեան գաղափարով եւ սրտի պարապութեան ունայնութեամբ կ'ապրի: «Ընդհանուր վիշտ մը կը զգամ, ամէն բանի վիշտը» (68): «Միտքիչ բան մը չկայ. տխուր, զարմանալի, անագորոյն պարապութիւն մը...: Ոչ մէկ ցնորք, ոչ մէկ երգ: Եւ ինքզինքս զգուշիկ կերպով թշուառ կը զգամ» (63, 64): Այս զգացումներէն մղուած յանձնուեցաւ ներքին առանձնութեան՝ աւելի մեկուսացած ապրելով. սակայն առանձնութիւն մը «ինքնեղ, առաքինի ու բեղուն» (54): «Միջավայրին համակերպութիւնը, որ անոր հաստատութիւնն է՝ ուրացում մ'է... անձին բուն արժէքին, առաջին մանկութեան մէջ ծրագրուած ապագայ մարդուն... Եսին բոլոր աղատ ու բարերար կարելիութեանց» (53):

Առանձնութիւն չի նշանակեր հոգեկան պարապութիւն. մանկութեան յուշերը սիրելի եղած են իրեն, ու միայնութեան պահերուն ապրած է անոնցմով: Այս յուշերը բազմաթիւ էին՝ ուրախալի կամ տխրառիթ. բայց գլխաւորապէս երկու հատ՝ Սեւ ծովի բնակարէն ծագածը ու Իրենա օրիորդինը, աւելի սեւեռուն տողորուած են բանաստեղծին յիշողութեան մէջ, ու միշտ ապրած է անոնց ոգեկոչումով: Երկու յուշերն ալ կը բղխին մարդկային հոգեւոյ երկու արմատական ձգտումներէ. ձգտում Անսահմանին, որու պատկերացումն էր Սեւ ծովի անեղրութիւնը, եւ զգացումը սիրոյ, խորհրդանշուած կնոջ դէմքով: Երկու ընդհանրական եւ բուն ձգտումներ, տիրող Ինտրայի ամբողջ էութեան վրայ:

Սեւ ծովը իր անեղր տարածականութեամբ, իր «խորտակող ալիքներուն գահալէժ ժանեակներով ողողուն», եւ ինչպէս կը գրէ «եղած է մանկութեան անթառամ անուրջը. բանաստեղծի մանկութեան անուրջի անճառ մեծութեամբը» (29). ու կ'աւելցնէ «Մանկութեան իրադրոժուած երազին ցնորական վերիտէացումը... որ անըզդայապէս տողորուեր էր նորօտար զգայութեամբ մը, ուր Սեւ ծովուն գաղափարին վայրենութիւնը երկնակապոյտ օժմամբ մը կ'այեւրանար» (46). որով «Աննիւթական սէր մը կը խայտար հիմա վհախոյզ անդրատենչութեան մէջ» (46): Անշուշտ բանաստեղծը կը կարծէ տեսնել Սեւ ծովին մէջ պատկերը իր անհանգարտ կեանքին ալ, որու օրերը՝ նման ալիքներու, իրարու կ'ընդհարէին առանց երբեք խաղաղելու: Ինքը կը տեսնէ նաեւ որ խորհրդաւոր էութիւն մը կը թեւածէ ալիքներուն վրայ՝ գիշերային լուռ մթութեան մէջ, անըրջ ջային ոգի մը: Հուսկ Սեւ ծովը իր անհուն տարածքով կ'առաջնորդէ իր միտքը անեղրութեան անսահման էակին, իր խակ խոստովանութեամբ, ու այս մտածութիւնը կ'ազդէ իր հոգեկան կեանքին ու արուեստագետի տրամադրութեան վրայ. «Սեւ ծովուն աղի հոծութիւնն





լէ անոնց հետքերու վրայէն, ինչպէս ճրագի շողերուն, հովի հնչիւններուն, խաւարի ուրուականներուն, ալիքներու փրփուրներուն: Համադրական ներկայացումները բազմաթիւ են. նմանապէս քիչ չեն խորհրդածութիւնները եւ մտքի թափառումները: Պարբերութիւնը յաճախ կազմուած է անկախ ասացուածքներէ: Գրութեան ոճը ունի կորով եւ լիութիւն, բայց միշտ սահուն եւ ներդաշնակ չէ. կը զգացնէ յուզուած ու ալեկոծ սրտի մը ծփծփանքը:

«Ներաշխարհ»ի բանաստեղծութիւնը անթերի չէ, ու հեղինակն ալ նկատած է ասիկա հատորին Մանօթուքեան մէջ, ինչպէս ըսուեցաւ: Ինտրայի կը պակսի գլխաւորապէս ընտրելու ճաշակը ու չափի զգացողութիւնը: Կը պակսի նաեւ որոշեալ ծրագիր մը եւ նախատեսութիւնը ամբողջական գործին: Գիրքը հաւաքածոյ ըլլալու երեւոյթը ունի եւ ուր ներկայացուած են՝ պարագաներու բերումով խորհրդածութիւններ, հոգեկան վիճակներու վերլուծումներ, նկարագրութիւններ իրերու եւ բնութեան տեսարաններու, յուշագրութիւն ուղեւորութեանց, առօրեայ կեանքի դէպքեր. բոլորը կ'ընդգրկէ 1898-1900ի երկու տարիներու շրջանը. հարեւանցի ընթերցում մը կարծել պիտի տայ թէ պարագայական հանգամանք ունեցող հատոր մ'ըլլայ. իրականին մէջ այդ այլազան իրերը եւ դէպքերը ներկայացնելով, գլխաւորապէս նկատողութեան առնուած են հեղինակին ներքին ապրումները ու հոգեկան վիճակները՝ աւելցնելով ամբողջական շարքով, որով բանաստեղծին ծննդէն է որ ներկայացուած է իր բովանդակ կեանքով. անշուշտ ընտրութիւն մը կրնար աւելի արժէքաւորել այդ հատորը: Արտայայտութիւնն ալ մերթ մթադնած է՝ մանաւանդ վերացական նիւթերու շուրջ խօսուած ատեն. յետոյ, մղուած ինքնատիպ ըլլալու մարմաջէն, կը գործածէ ըսելու անսովոր ձեւեր, անճաշակ բարդութիւններ, դարբարածեւ արտայայտութիւն եւ փնտրուած նրբութիւն:

Դարձեալ նշելու է թէ ինչպէս երբեմն, բանաստեղծութեան արտադեղումը՝ մտածումի օժանդակութեամբ, կը ստանայ զաղափարական խորութիւն, աւելի բնականացական տեսութիւններ նկատած ժամանակ, եւ գրելու ձեւն ալ կը դառնայ աւելի ծաւալուն, որով ոճն ալ միշտ միաձոյլ չէ, այլ բեկբեկումներով բեռնաւոր. սակայն լեզուն հարուստ է գոյնով ու պատկերներով: Իր միտքը զբաղցնող նիւթերէն եղած է Անդենականին խորհուրդը, որ իրեն կը ներկայանայ իր կեանքի ամէն մէկ անկիւնադարձին: Իրապէս ինտրա կ'ապրի իր ոչնչութեան զգացումով. ու ինչպէս տիեզերքին մէջ կը նկատէ, նմանապէս իր գիտակցութեան մէջ կը կրէ «Անեղրութեան էացուցիչին ներկայութիւնը» ինչպէս կը գրէ. «Անունը որ մանկութեանս ինծի չեմ գիտեր ինչ վրդովիչ անծանօթի մը խորհրդանշան մը կը թը-

ւէր, եւ որ գիտեմ՝ թէ Անհունին առաջին ըմբռնումը էր իմ պատկերամոլ տղայութեանս, առաջին հեռագրացումը՝ տարտամօրէն, այլ. արդէն հարկադրօրէն երկրպագելի Անեղրութեան... Առաջին պաշտամունքս, առաջին եղջերուաքաղս էր ան, իմ առաջին յուսահատութիւնս» (30): Բանաստեղծին փափաքն էր անշուշտ յանձնուիլ ամբողջապէս այդ «Անեղր»ին որպէսզի բնութեան երեւոյթներէն վերանայով, կարող ըլլար հասնիլ «Բացարձակ»ին պաշտելութեան: Սակայն «Ներաշխարհ»ի մէջ կը դտնենք միտք մը, որ կը խաբէսփի միշտ, սիրտ մը որ չի հասնիր իր սիրոյ գոհունակութեան, ու թէեւ իր Եսը կը ձգտի միշտ Լոյսին, բայց միշտ ալ ստուերոտ շղարշներու մէջ օրօրուելով: Ճակատագրական էր որ ինքը շարունակէր տակաւին իր բանաստեղծի կեանքը: Հոգւոյն մէջ կարծես սպաննուած բան մը կայ: Զգայուն, թախծոտ, կարօտով զեղուն, կարօտ սիրուելու, կարօտ Անեղրին, բայց միւս կողմէ մտքին մէջ ամէն ինչ աննպատակ՝ նման իր կեանքին, ամէն ինչ ձեւաւորուելու վիճակի մէջ, առանց յանգելու լիութեան եւ լրութեան:

Ինչ կը մնայ այս «Ներաշխարհ»էն, որու կեանքը այնքան հոգեպինդ եւ խռովակոծ ապրեցաւ ինտրա իբր տոմար մը, իբր իր հոգեկան աշխարհը, եւ ուղեց արձանագրել անոր ամենախոր եւ ամենանորր զարկերն ու թրթռացումները, աւանդելու համար մեզի բանաստեղծութեան ծաղկածութեան այլազան երանգներով, ու տիեզերքի երգին յեղեղով ձայներով. բայց լուկ երդ մը չեղաւ. ամէն ոք՝ դիտակից իր ինքնութեան եւ մարդկային կեանքի խորհուրդին, կրնայ տեսնել եւ զգալ այդ տոմարին մէջ, համայնական պատկերը մարդկութեան ճակատագրին, ու յանգելու համար իրականութեան մը, կ'անտեսէ այդ ճակատագիրը՝ յանձնուելով երեւոյթներուն եւ արուեստին: Այս տեսակէտով «Ներաշխարհ»ը վախճան մը չի ներկայացներ, քալել ու երթալ մըն է հեռաւոր իրերու, որոնք սակայն իրեն չեն մօտենար, որով կը մնայ բաղձանք միշտ բաղձանք, երթը՝ քալել մը: Իր իրենան ալ ճամբորդ մըն է, որու կը դիմէ քերթողը՝ միշտ դիմելու համար. ու այս չհասնելու կսկիծը գուցէ իր գեղեցկութիւնը ունի:

Ոեւէ բանաստեղծի կեանքը սիրոյ կեանք է, թաքուն՝ կամ յայտնի արտադեղումով. ասով բանաստեղծութիւնն ալ կը պահէ իր մանկական եւ տիեզերական թաքնութիւնը, եւ ուր դիւրին է նշմարել զգացողութեանց բուրբումաւէտ փթթումը: Կայ դարձեալ բանաստեղծին մէջ կարօտը լոյսին, ու իրեն համար կեանքը պէտք է որ ներկայանայ լոյսի բիւրեղային ցուքերով զուարթացած: Ասով հանդերձ ոեւէ բանաստեղծութեան մէջ լոյսին կ'ընկերանայ ցաւին ստուերը: Կեանքի լոյսը մահուան քայլերով կը յառաջանայ:

Հ. Կ. ՔԻՊԱՐԵԱՆ